բան, զի ճոխիւ և բնական իրաւամբ հաստատել Օրէնս մէջ ազգին Հայոց, զի ազգն իմ 'ի ծառայութենէ և ինքնակամ հրամայօղացէ զերծցի և մոցէ սեպհական աշխարհն իւր Հայոց, այսինքն Հայաստան, զի ժառանգեսցէ կեանս իւր ըստ Օրինօք, այս միայն լիցի մխիթարութիւն իմ և վարձ աշխատանաց իմոց, և միաբան փառաւորելով Տեառն Արարիչն մեր Հայր և որդի և սուրբ Հոգի միայն Աստուածն մեր այժմ և միշտ և յաւիտեան։

Որպէս սովորութիւն է ամենայն գործի նախ ճանաչել անունք և չափաւորութիւնք և կշիռ, այսպէս հարկաւոր է մեզ անուանիլ բացատրութիւն անուանց որ յինէն ռամկօրէն անուանեցեալ, այսինքն մինչ ոչ տացի ձայն ոսկերաց անդամոց մերոց, ոչ ոք կարէ ճառել անձնաւորութիւնն բնութեան մերոյ, այսինքն խորտակեցաւ բազուկ Մանասէի, մինչ ոչ ունենամք ծանօթութիւն անուանց ոչ կարեմք իմանալ՝ որում անդամից է բազուկն, և կամ Շնորհեցաւ 'ի կայսերէն երիս տաղանդս 'ի բարսեղ մարաշեցոյ մինչ ոչ ծանիցուք որքանութիւն տաղանդին ոչ կարի յիմանալ որքանութիւնն շնորհաբաշխութեան, նաև եթէ վարդան ստրայտելատն զօրօք իւրովք ընթացաւ 'ի միում աւուր վեց տասարէգ, եթէ ոչ ծանեաք որքանութիւն տասարէգին՝ ոչ կարեմք իմանալն ընթացն ստրատելատին և այլն